Երկրորդ ընթերցում

Լրամշակված

Կ-746[1]-18.12.2023,01.02.2024-ՏՏԳԾ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 1985 թվականի դեկտեմբերի 6-ի Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 63.2-րդ հոդվածի՝

1) վերնագիրը «պահանջները» բառից հետո լրացնել «կամ պայմանները» բառով.

2) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Առանց ջրօգտագործման թույլտվության մակերևութային ջրային ռեսուրսներից ջրօգտագործում իրականացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից մինչև չորսհարյուրապատիկի չափով, իսկ իրավաբանական անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից մինչև ութհարյուրապատիկի չափով:».

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին և 1.2-րդ մասերով.

«1.1. Լուծարված հորատանցքերը վերաբացելը կամ առանց ջրօգտագործման թույլտվության ստորերկրյա ջրային ռեսուրսներից ջրօգտագործում իրականացնելը կամ առանց ջրօգտագործման թույլտվության ջրօգտագործման նպատակով հորատանցք հորատելը կամ առանց ջրօգտագործման թույլտվության կոնսերվացված հորատանցքերի վերաբացելը, եթե դա էական վնաս չի առաջացրել (պատճառված նյութական վնասը չի գերազանցում սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկը)՝

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկից մինչև հազարհինգհարյուրապատիկի չափով, իսկ իրավաբանական անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկից մինչև երեքհազարապատիկի չափով:

1.2. Ֆիզիկական և իրավաբանական անձանց սեփականություն հանդիսացող տարածքներում լուծարված հորատանցքերի վերաբացումը, իսկ առանց ջրօգտագործման թույլտվության նաև ջրօգտագործման նպատակով հորատանցքերի հորատումը կամ առանց ջրօգտագործման թույլտվության կոնսերվացված հորատանցքերի վերաբացումը՝ տարածքի սեփականատեր հանդիսացող ֆիզիկական և իրավաբանական անձանց համար՝

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկից մինչև հազարհինգհարյուրապատիկի չափով, իսկ իրավաբանական անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկից մինչև երեքհազարապատիկի չափով:».

4) 2-րդ մասը «պահանջները» բառից հետո լրացնել «կամ պայմանները» բառով.

5) լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-ին մասով.

«2.1. Արտեզյան (ճնշումային) ջրերից ջրօգտագործման դեպքում ջրօգտագործման թույլտվության պահանջները կամ պայմանները չկատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից մինչև ութհարյուրապատիկի չափով, իսկ իրավաբանական անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկից մինչև հազարհինգհարյուրապատիկի չափով:».

Հոդված 2. Օրենսգրքի 88-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 88**. **Կենդանական, այդ թվում՝ ձկան պաշարների պահպանության, որսի և ձկնորսության, ինչպես նաև կենդանական աշխարհից օգտվելու մյուս կանոնները խախտելը**

1. Կենդանական, այդ թվում՝ ձկան պաշարների պահպանության, որսի և ձկնորսության, ինչպես նաև կենդանական աշխարհից օգտվելու մյուս կանոնները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթանասունապատիկից մինչև հարյուրքառասունապատիկի չափով, իսկ իրավաբանական անձի նկատմամբ՝ հարյուրապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով՝ խախտողի անձնական սեփականություն հանդիսացող հրացանների ու որսորդական միջոցների, ինչպես նաև հիշյալ խախտումները կատարելու գործիք համարվող մյուս առարկաների և կենդանիների բռնագրավմամբ:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը, որը կատարվել է սիգ ձկնատեսակի նկատմամբ՝

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից մինչև չորսհարյուրապատիկի չափով, իսկ իրավաբանական անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից մինչև վեցհարյուրապատիկի չափով՝ խախտողի անձնական սեփականություն հանդիսացող որսագործիքների, ձկնորսական ցանցերի, ինչպես նաև հիշյալ խախտումները կատարելու գործիք համարվող մյուս առարկաների կամ որսված սիգի, ինչպես նաև դրա արգասիքների բռնագրավմամբ:

3. Սևանա լճում ձկնորսության նպատակով օգտագործվող լողամիջոցները արդյունագործական որսի համար ստեղծված կամ նախատեսված մուտքի և ելքի տեղամասերից դուրս տարածքներից մուտք և ելք իրականացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

4. Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը որսի թույլտվության ժամանակահատվածում՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:».

Հոդված 3. Օրենսգրքի 89-րդ հոդվածի 1-ին մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 2-րդ և 3-րդ մասերով՝

«2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը, որը կատարվել է սիգ ձկնատեսակի կամ սիգ ձկնատեսակի ձկնկիթի նկատմամբ՝ մանր չափի գույքային վնաս պատճառելով՝

1) առանց համապատասխան թույլտվության, կամ

2) դրանց որսի կամ արդյունահանման համար արգելված ժամանակ, կամ

3) արգելված վայրում, կամ

4) արգելված գործիքներով, միջոցներով կամ եղանակներով՝

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից մինչև չորսհարյուրապատիկի չափով, իսկ իրավաբանական անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից մինչև վեցհարյուրապատիկի չափով՝ խախտողի անձնական սեփականություն հանդիսացող որսագործիքների, ձկնորսական ցանցերի, ինչպես նաև հիշյալ խախտումները կատարելու գործիք համարվող մյուս առարկաների, ապօրինի որսված կամ ապօրինի արդյունահանված սիգի կամ սիգի ձկնկիթի բռնագրավմամբ:

3. Սույն հոդվածի 2-րդ մասի իմաստով՝ մանր չափ է համարվում մինչև 150 000 Հայաստանի Հանրապետության դրամը չգերազանցող գումարը (արժեքը):»:

Հոդված 4. Օրենսգրքի 162-րդ հոդվածը՝

1) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 1.1-ին մասով՝

«1.1. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը, որը կատարվել է սիգ ձկնատեսակի կամ սիգ ձկնատեսակի ձկնկիթի նկատմամբ՝

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրհիսունապատիկից մինչև երեքհարյուրապատիկի չափով, իսկ իրավաբանական անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկից մինչև հինգհարյուրապատիկի չափով՝ առևտրի կամ ծառայությունների մատուցման ընթացքում օգտագործվող և իրավախախտում կատարած անձին կամ երրորդ անձին սեփականության իրավունքով պատկանող առարկաների բռնագրավմամբ կամ առանց դրա:

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 3-րդ մասով՝

«3. Սույն հոդվածի 1.1-ին մասով սահմանված արարքը վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձի նկատմամբ սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի չափով, իսկ իրավաբանական անձի նկատմամբ սահմանված նվազագույն աշխատավարձի վեցհարյուրապատիկի չափով՝ առևտրի կամ ծառայությունների մատուցման ընթացքում օգտագործվող և իրավախախտում կատարած անձին կամ երրորդ անձին սեփականության իրավունքով պատկանող առարկաների կամ կենդանիների կամ դրանց արգասիքների բռնագրավմամբ կամ առանց դրա:»:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հուլիսի 1-ից:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՓՈՓՈԽՎԱԾ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 1. 1985 թվականի դեկտեմբերի 6-ի Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 63.2-րդ հոդվածի՝

1) վերնագիրը «պահանջները» բառից հետո լրացնել «կամ պայմանները» բառով.

2) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Առանց ջրօգտագործման թույլտվության մակերևութային ջրային ռեսուրսներից ջրօգտագործում իրականացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից մինչև չորսհարյուրապատիկի չափով, իսկ իրավաբանական անձի նկատմամբ՝

սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից մինչև ութհարյուրապատիկի չափով:».

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին և 1.2-րդ մասերով.

«1.1. Լուծարված հորատանցքերը վերաբացելը կամ առանց ջրօգտագործման թույլտվության ստորերկրյա ջրային ռեսուրսներից ջրօգտագործում իրականացնելը կամ առանց ջրօգտագործման թույլտվության ջրօգտագործման նպատակով հորատանցք հորատելը կամ առանց ջրօգտագործման թույլտվության կոնսերվացված հորատանցքերի վերաբացելը, եթե դա էական վնաս չի առաջացրել (պատճառված նյութական վնասը չի գերազանցում սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկը)՝

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկից մինչև հազարհինգհարյուրապատիկի չափով, իսկ իրավաբանական անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկից մինչև երեքհազարապատիկի չափով:

1.2. Ֆիզիկական և իրավաբանական անձանց սեփականություն հանդիսացող տարածքներում լուծարված հորատանցքերի վերաբացումը, իսկ առանց ջրօգտագործման թույլտվության նաև ջրօգտագործման նպատակով հորատանցքերի հորատումը կամ առանց ջրօգտագործման թույլտվության կոնսերվացված հորատանցքերի վերաբացումը՝ տարածքի սեփականատեր հանդիսացող ֆիզիկական և իրավաբանական անձանց համար՝

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկից մինչև հազարհինգհարյուրապատիկի չափով, իսկ իրավաբանական անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկից մինչև երեքհազարապատիկի չափով:».

4) 2-րդ մասը «պահանջները» բառից հետո լրացնել «կամ պայմանները» բառով.

5) լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-ին մասով.

«2.1. Արտեզյան (ճնշումային) ջրերից ջրօգտագործման դեպքում ջրօգտագործման թույլտվության պահանջները կամ պայմանները չկատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից մինչև ութհարյուրապատիկի չափով, իսկ իրավաբանական անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկից մինչև հազարհինգհարյուրապատիկի չափով:».

Հոդված 2. Օրենսգրքի 88-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 88. Կենդանական, այդ թվում՝ ձկան պաշարների պահպանության, որսի և ձկնորսության, ինչպես նաև կենդանական աշխարհից օգտվելու մյուս կանոնները խախտելը**

1. Կենդանական, այդ թվում՝ ձկան պաշարների պահպանության, որսի և ձկնորսության, ինչպես նաև կենդանական աշխարհից օգտվելու մյուս կանոնները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթանասունապատիկից մինչև հարյուրքառասունապատիկի չափով, իսկ իրավաբանական անձի նկատմամբ՝ հարյուրապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով՝ խախտողի անձնական սեփականություն հանդիսացող հրացանների ու որսորդական միջոցների, ինչպես նաև հիշյալ խախտումները կատարելու գործիք համարվող մյուս առարկաների և կենդանիների բռնագրավմամբ:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը, որը կատարվել է սիգ ձկնատեսակի նկատմամբ՝

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից մինչև չորսհարյուրապատիկի չափով, իսկ իրավաբանական անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից մինչև վեցհարյուրապատիկի չափով՝ խախտողի անձնական սեփականություն հանդիսացող որսագործիքների, ձկնորսական ցանցերի, ինչպես նաև հիշյալ խախտումները կատարելու գործիք համարվող մյուս առարկաների կամ որսված սիգի, ինչպես նաև դրա արգասիքների բռնագրավմամբ:

3. Սևանա լճում ձկնորսության նպատակով օգտագործվող լողամիջոցները արդյունագործական որսի համար ստեղծված կամ նախատեսված մուտքի և ելքի տեղամասերից դուրս տարածքներից մուտք և ելք իրականացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

4. Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը որսի թույլտվության ժամանակահատվածում՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:».

Հոդված 3. Օրենսգրքի 89-րդ հոդվածի 1-ին մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 2-րդ և 3-րդ մասերով՝

«2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը, որը կատարվել է սիգ ձկնատեսակի կամ սիգ ձկնատեսակի ձկնկիթի նկատմամբ՝ մանր չափի գույքային վնաս պատճառելով՝

1) առանց համապատասխան թույլտվության, կամ

2) դրանց որսի կամ արդյունահանման համար արգելված ժամանակ, կամ

3) արգելված վայրում, կամ

4) արգելված գործիքներով, միջոցներով կամ եղանակներով՝

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից մինչև չորսհարյուրապատիկի չափով, իսկ իրավաբանական անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից մինչև վեցհարյուրապատիկի չափով՝ խախտողի անձնական սեփականություն հանդիսացող որսագործիքների, ձկնորսական ցանցերի, ինչպես նաև հիշյալ խախտումները կատարելու գործիք համարվող մյուս առարկաների, ապօրինի որսված կամ ապօրինի արդյունահանված սիգի կամ սիգի ձկնկիթի բռնագրավմամբ:

3. Սույն հոդվածի 2-րդ մասի իմաստով՝ մանր չափ է համարվում մինչև 150 000 Հայաստանի Հանրապետության դրամը չգերազանցող գումարը (արժեքը):»:

Հոդված 4. Օրենսգրքի 162-րդ հոդվածը՝

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 1.1-ին մասով՝

«1.1. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը, որը կատարվել է սիգ ձկնատեսակի կամ սիգ ձկնատեսակի ձկնկիթի նկատմամբ՝

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրհիսունապատիկից մինչև երեքհարյուրապատիկի չափով, իսկ իրավաբանական անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկից մինչև հինգհարյուրապատիկի չափով՝ առևտրի կամ ծառայությունների մատուցման ընթացքում օգտագործվող և իրավախախտում կատարած անձին կամ երրորդ անձին սեփականության իրավունքով պատկանող առարկաների բռնագրավմամբ կամ առանց դրա:

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 3-րդ մասով՝

«3. Սույն հոդվածի 1.1-ին մասով սահմանված արարքը վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձի նկատմամբ սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի չափով, իսկ իրավաբանական անձի նկատմամբ սահմանված նվազագույն աշխատավարձի վեցհարյուրապատիկի չափով՝ առևտրի կամ ծառայությունների մատուցման ընթացքում օգտագործվող և իրավախախտում կատարած անձին կամ երրորդ անձին սեփականության իրավունքով պատկանող առարկաների կամ կենդանիների կամ դրանց արգասիքների բռնագրավմամբ կամ առանց դրա:»:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է ~~մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:~~ 2024 թվականի հուլիսի 1-ից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-746-18.12.2023,01.02.2024-ՏՏԳԾ-011/1), «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-746[1]-18.12.2023,01.02.2024-ՏՏԳԾ-011/1), «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-746[2]-18.12.2023-ՏՏԳԾ-011/1) ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	Կառավարություն	«Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծ (այսուհետ՝ Նախագիծ)	1. Նախագիծը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 1-ին հոդվածով. «**Հոդված 1.** 2002 թվականի հունիսի 4-ի Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 27-րդ հոդվածի 1-ին մասի «և ջրօգտագործման թույլտվություն ստացած անձի» բառերը հանել:»՝ հաշվի առնելով, որ ջրօգտագործման թույլտվության տրամադրման	1. Ընդունվել է	Ընդունվել է

			գործընթացն իրականացվելու է բացառապես էլեկտրոնային եղանակով:		
		2 .Նախագծի ամբողջ հոդվածներ	2 .Նախագծի հոդվածների համարակալումները փոփոխել՝ պայմանավորված Նախագծում նոր հոդվածի լրացմամբ:	2.Ընդունվել է	Ընդունվել է
		3. Նախագծի 1-ին հոդված	3. Նախագծի 1-ին հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «**Հոդված 2.** Օրենսգրքի 30-րդ հոդվածի 3-րդ մասը «պահանջներով» բառից հետո լրացնել «կամ պայմաններով» բառերով:»:	3. Ընդունվել է	Ընդունվել է
		4. 11-րդ հոդվածի 1-ին մաս	4. Որոշակիության սկզբունքն ապահովելու նպատակով Նախագծի 11-րդ հոդվածի 1-ին մասով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենսգրքի 117-րդ հոդվածի 5-րդ մասի՝ - «կարող է ապահովել հրահանգում» բառերը փոխարինել «ապահովում է ծանուցագրում» բառերով, - 1-ին կետի «կամ ուղղակի կամ անուղղակի ձևով նպաստել են» բառերը հանել, իսկ «խախտմանը» բառը փոխարինել «խախտման համար» բառերով, - 3րդ կետի «կամ առաջացել է խախտման հնարավորությունը» բառերը հանել, քանի որ հիշյալ հոդվածը վերաբերում է Օրենսգրքի պահանջների **խախտման** մասին ծանուցումներին:	4. Ընդունվել է	Ընդունվել է

		5. Նախագծի 12-րդ հոդված	5. Նախագծի 12-րդ հոդվածը վերնագրել:	5. Ընդունվել է	Ընդունվել է
		6. «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ 1) 1-ին հոդված	6. Նախագիծ 1-ի 1-ին հոդվածի 1-ին մասով Օրենսգրքում լրացվող նոր 375.1-ին հոդվածի՝ - վերնագիրը համապատասխանեցնել հոդվածի բովանդակությանը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասը, - հոդվածը համարակալել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասը, - հանցակազմի սանկցիան Օրենսգրքի ընդհանուր մասի նորմերին (հոդված 59) համապատասխանեցնելու նպատակով՝ լրացվող հանցակազմի սանկցիայում տուգանք պատժատեսակի համար առավելագույն շեմը վաթսունապատիկի փոխարեն սահմանել հիսնապատիկ:	6. Ընդունվել է	Ընդունվել է
		7. Նախագիծ 1-ի 3-րդ հոդված և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության	7. Վերանայել օրենքի ուժի մեջ մտնելու ժամկետը՝ հաշվի առնելով Նախագիծ 1-ով նախատեսվող կարգավորումները և հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասը, համաձայն որի՝ **նորմատիվ իրավական ակտն**	7. Ընդունվել է	Ընդունվել է

		օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 5-րդ հոդված	**ընդունելու իրավասություն ունեցող մարմինը պարտավոր է նախատեսել նորմատիվ իրավական ակտի ուժի մեջ մտնելու ավելի ուշ ողջամիտ ժամկետ,** բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված նորմատիվ իրավական ակտերի, **եթե ակտով սահմանվում են այնպիսի իրավակարգավորումներ, որոնց համար անհրաժեշտ է հիմնավոր ժամանակահատված, որը հնարավորություն կտա հասցեատիրոջը իր վարքագիծը համապատասխանեցնելու սահմանված պահանջներին, կամ սահմանված իրավակարգավորումները վատթարացնում են անձի իրավական վիճակը:** Նույն դիտարկումը վերաբերում է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծին:		